## ԿԵԱՆՔԸ ԺԱՌԱՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Վարժարանիս 1981–1982 Ուսումնական Տարեշրջանի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 22 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 9ին, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ի ներկայութեան Վերատեսուչ Սրբազան Հօր, Ս. Աթոռոյս Միաբանութեան, ուսուցչական կազմին և ուսանողութեան։ Ն. Ամենապատուութիւնը Վարժարանի արտաքին դռնէն առաջնորդուեցաւ թափօրով և «Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռոյս օրհներգ-շարականով։ Գործադրուեցաւ կոկիկ յայտագրութիւն մը, բաղկացած «Սիրտ ի սիրտ» Վարժարանի քայլերգի երգեցողութենէն և Նարեկէն ու Ս. Աւետարանէն կատարուած ընթերցումներէ, որոնց աւարտին Սրբ. Պատրիարք Հայրը ըրաւ յորդորական իր խօսքը։ Միաբերան երգուած «Հայր մեր»էն ետք, աշակերտները մեկնեցան իրենց դասարանները, համակաշ կազդուրումէ մը ետք նոր ոգեւորութեամբ մը հետեւելու ուսումնական դասընթացքներուն։

Ստորեւ կու տանք նկարագրականը Վարժարանէն ներս կազմակերպուած Շաբաթօրեայ երեկոյթներուն.—

26 Սեպտեմբերին, Ամերիկայէն հիւրաբար քաղաքս գտնուող Հոգշ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Կիզիրեան բանախօսեց «Հայց. Եկեղեցին Ներկայ Ժամանակներուն» նիւթին շուրջ։

3 Հոկտեմբերին, ծանօթ նկարիչ Արշաւլոյս Պէրպէրեան բանախօսեց «Ինչպէ՞ս դիտել նկար մը, ո՞ւր փնտռել նկարի մը գեղագիտական արժէքը» նիւթի մասին։ Դասախօսութիւնը, որ կայացաւ հանդիսասրահին մէջ, ունէր հրապարակային բնոյթ։ Ներկայ էր նաեւ Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս։

10 Հոկտեմբերին դասախօսեց Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս, «Վարագայ Ս. Խաչ» նիւթին շուրջ, որուն յիշատակի նախօրեակն էր։

17 Հոկտեմբերին կայացաւ արտասանական մրցանք, Վարժարանիս Ա. և Բ. դասարաններու աշակերտներուն միջեւ։ Դատախազական Մարմինը կը բաղկանար Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Պալեանէ, Հոգշ. Տ. Արփիար Աբղ. Տէմիրճեանէ և Տեսուչ Արժ. Տ. Ներսէս Աւագ Քհնյ. Ճէպէճեանէ։ Ա. դասարանէն Շնորհք Եաղըրեան և Բ. դասարանէն Վարդան Մելքոնեան ստացան մրցանակ։

24 Հոկտեմբերին, Ս. Թարգմանչաց Վարդապետաց տօնին առիթով հանդիսասրահին մէջ կայացաւ հրապարակային տօնակատարութիւն, ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ստուարաթիւ ժողովուրդի։ Գեղարուեստական յայտագիր մը գործադրուեցաւ, որուն մէջ մաս առին Տրց. Արամ Ալճանեան՝ մեներգելով «Ով մեծասքանչը» և Եղիա Սրկ. Շմաւոնեան՝ արտասանելով Սիամանթոյի «Ս. Մեսրոպ»էն հատուածներ։ Ժառ. սաներ խմբերգեցին «Որք զարդարեցին»՝ տօնին շարականը։ Խաչիկ Սրկ. Գարայեան իր խօսքի ընթացքին իր և ընկերներուն կողմէ շնորհաւորեց օրուան բանախօս Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, անոր անուան տօնին առիթով։ Ն. Ամենապատուութիւնը մի առ մի անդրադարձաւ օրուան տօնելի վեց սուրբերուն կեանքին ու անկշռելի վաստակին։ Հանդէսը փակուեցաւ «Տէր, կեցո» մաղթերգով, որմէ ետք ներկաները հիւրասիրուեցան զովացուցիչով և կարկանդակով։

31 Հոկտեմբերին տեղի ունեցաւ Աստուածաշնչական հարցմանց մրցում՝ երկու դասերու աշակերտներու միջեւ։ Աջակողմեան դասը յաղթական հանդիսացաւ։

Ուրախ ենք յայտնելու նաեւ թէ Վարժարանիս սաներէն Սերոբ Ալճանեան և Եղիա Շմաւոնեան Աւագ Սարկաւագ ձեռնադրուեցան Կիրակի, 11 Հոկտեմբեր, Վարագայ Ս. Խաչի տօնին, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին։ Պատարագիչ Սրբազանը, Պատր. Փոխանորդ և Վարժարանիս Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս., կատարեց ձեռնադրութիւնը։ — Կէսօրին, Ս. Պատրիարք Հայրը, Միաբանութիւնը, ուսուցչական կազմը և աշակերտութիւնը ներ-

digitised by A.R.A.R.@

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ՀԵՌԱԳԻՐ

Երուսաղէմ, 30 Սեպտ. 1981

Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Ձեր Սրբութեան գահակալութեան եւ օծման 26րդ տարեդարձին ուրախ առիթով, հաճեցէք ընդունիլ Մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Սաղիմահայ համայնքի ջերմագին շնորհաւորութիւնները, երկար ու երջանիկ օրերու լաւագոյն բարեմաղթութիւններով հանդերձ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԲԵՄԱԿԱՆՔ

● *Շբ. 5 Սեպտ.* — Է. օր Վերափոխման: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արղ. Մանկասարեան։*

● *Կիր. 6 Սեպտ.* — Ը. օր Վերափոխման: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ։ Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան։*

● *Բշ. 7 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։*

● *Գշ. 8 Սեպտ.* — Ս. Յովակիմայ եւ Աննայի: *Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ։ Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալայճեան։ Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Հոգշ. Տ. Դանիէլ Վրդ.։*

● *Շբ. 12 Սեպտ.* — Թովմայի առաքելոյն: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Արփիար Աբեղայ։*

*— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան։*

● *Կիր. 13 Սեպտ.* — Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։ Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց և Ս. Կոյսի Նկարագրի բարեխօսութեանց մասին քարոզեց Գերշ. Տ. Շահէ Արքեպս.։*

● *Շբ. 19 Սեպտ.* — Նիկիոյ Ս. Ժողովոյն (325): *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Աբեղայ։*

● *Կիր. 20 Սեպտ.* — Բարեկենդան Ս. Խաչի պահոց: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատարան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Առաքել Վրդ. Գալեան։*

*— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս.։*

● *Բշ. 21 Սեպտ.* — Ծնունդ Ս. Աստուածածնի: *Առաւօտուն, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Ամերիկայէն հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Հոգշ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Կիզիրեան, եկեղեցական խօսք ի գլուխ։*

● *Շբ. 26 Սեպտ.* — Տօն Եկղց. ի Նաւակատիս Ս. Խաչին: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Աբղ.։*

---

*կայ եղան ի պատիւ Նորընծայ Սարկաւագներուն տրուած ճաշկերոյթի մը՝ Վարժարանի ճաշասրահին մէջ, Ն. Ամենապատուութիւնը խօսեցաւ յորդորական մը։*

*Սոյն տարեշրջանին սկսանք նաեւ Բարոյախօսութեանց շարքի մը, ամէն Երկուշաբթի, Նախքան դասերուն սկսիլը։ Հետեւեալները, հինգական վայրկեան տեւողութեամբ, խօսեցան առաջ Նշանակուած նիւթերու շուրջ.—*

*5 Հոկտեմբեր — Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեան — «Ի՞նչ կը նշանակէ աշակերտ ըլլալ»։*

*12 Հոկտեմբեր — Տիար Յակոբ Մէնէշեան (Մարզիչ) — «Մարմինին խնամքը»։*

*19 Հոկտեմբեր — Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան — «Պարկեշտութիւն»։*

*26 Հոկտեմբեր — Արժ. Տ. Ներսէս Աւագ Քհնյ. Ճէպէճեան — «Երջանկութիւն»։*

*Ունեցանք նաեւ ֆութպոլի երկու մրցումներ, տեղական Արաբական և Գերմանական խումբերու հետ։ Երկու առիթներով մեր խումբը յաղթական հանդիսացաւ։*

digitised by A.R.A.R.@